ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ՝

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻ

ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Խորին վշտով համակված հաղորդում ենք Սովետական Միության Մինիստրների խորհրդի Նախագահ՝ Գեներալիսսիմուս Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի անակնկալ մահը:

Ի դեմս Հանգուցյալի, հայ ժողովուրդը կորցրեց իր ճշմարիտ բարեկամին ու պաշտպանին և իր պատմական իղձի իրագործողին, իսկ համայն մարդկությունը՝ մի մարդասեր անձն, որ իր պետական գործունեության շրջանում, իր վարած խաղաղասեր քաղաքականությամբ և խաղաղության գաղափարի պաշտպանությամբ ու ղեկավարությամբ, ջանք չխնայեց աշխարհը ավերից, մարդկությունը աղետներից ու տառապանքից զերծ պահելու և մարդկային կյանքը երջանիկ դարձնելու համար:

Առաջարկում ենք Հանգուցյալի հիշատակին մատուցանել սուրբ պատարագ և կատարել հոգեհանգիստ:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ